ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

3 դեկտեմբերի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

168
(3018)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## Ա. ՔՈՉԱՐՅԱՆԸ ՔՊ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ



«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ ՔՊ-ական պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը օրերս ներողություն է խնդրել ԱԺ պատգամավորներ Հրաչյա Հակոբյանից եւ Սիսակ Գաբրիելյանից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 12-ին՝ ՔՊ վարչության նիստի օրը, որի ժամանակ կանչվել էին նաեւ ՔՊ գզվռտոցի «հերոսները»՝ Անդրանիկ Քոչարյանը, Սիսակ Գաբրիելյանը եւ Հրաչյա Հակոբյանը՝ հասկանալու, թե ինչու է Անդրանիկ Քոչարյանը վայրահաչում երկու պատգամավորների հասցեին, Նիկոլ Փաշինյանը կտրուկ է եղել: Նա պահանջել է Անդրանիկ Քոչարյանից կա՛մ ապացուցել, որ Սիսակ Գաբրիելյանն ու իր աներորդի Հրաչյա Հակոբյանը բիզնեսմենի «դեղ ցրողներն են» կա՛մ ողջ խմբակցության առջեւ՝ ի տես բոլորի, ներողություն խնդրել պատգամավորներից նրանց վիրավորելու եւ զրպարտելու համար:

Ինչպես արդեն հայտնել ենք, Քոչարյանը Սիսակ Գաբրիելյանին եւ Հրաչյա Հակոբյանին պիտակավորել է՝ նրանց կապելով խաղադրույքներով եւ թմրաբիզնեսով հարստացող գործարարների հետ՝ ասելով գործարարի «դեղ ցրողներ»: Եվ ահա տեղեկացանք, որ Անդրանիկ Քոչարյանը, գլուխը կախ, ՔՊ վարչության անդամների մոտ ներողություն է խնդրել Հակոբյանից եւ Գաբրիելյանից՝ իր սուտ խոսքերի եւ զրպարտությունների համար:

Նիկոլ Փաշինյանը խարդավանքների սիրահար Անդրանիկ Քոչարյանից պահանջել է նաեւ ներողություն խնդրել մյուս բոլոր ՔՊ-ականներից եւս, ում վիրավորել է, որոնց թիվը, ի դեպ, բավականին մեծ է: Ընդ որում, Փաշինյանը, պատիժը խստացնելու համար, պայման է դրել, որ Քոչարյանը մեղայական գա հենց կուսակցական նիստերի ընթացքում, բոլորի ներկայությամբ:

Անդրանիկ Քոչարյանը, սակայն, դեռ այս առումով դիմադրում է ու հրաժարվում է իր մյուս թիմակիցներից էլ ներողություն խնդրել՝ անտեղի պիտակավորելու ու վիրավորելու համար: Ի դեպ, Քոչարյանը կտրականապես դեմ է Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանից ներողություն խնդրել, որին բոլորի մոտ զրպարտում է, ինչի համար էլ Փամբուխչյանը դիմել է Փաշինյանին:

Դեռ միայն Փաշինյանի աներորդուց՝ Հրաչյա Հակոբյանից է ներողություն խնդրել ու Սիսակ Գաբրիելյանից:



ՔՊ-ում Նիկոլ Փաշինյանի փոխարեն արդեն պատգամավորներն են գործադիրում վերադասավորումներ անում: Ինչպես ՔՊ-ական Անդրանիկ Քոչարյանը ողջ իրավապահ կառույցի ղեկավարների ոտքի տակ փորեց ու հասավ նրան, որ Նիկոլ Փաշինյանը նրանց պաշտոնանկ անի, հիմա էլ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանն է որոշել իրենով անել առողջապահության նախարարությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը այս օրերին լծվել է նախարար Անահիտ Ավանեսյանին պաշտոնանկ անելու գործին: Նիկոլ Փաշինյանի մոտ եւ նաեւ հրապարակավ նա մատնանշում է առողջապահության ոլորտում տիրող խայտառակ վիճակը, բացթողումները, որպեսզի Փաշինյանը վերջնական որոշում կայացնի Անահիտ Ավանեսյանի վերաբերյալ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Նիկոլ Փաշինյանը վաղուց է մտքին դրել ազատվել Անահիտ Ավանեսյանից, ու «մազ» է մնում, որ վերջնական որոշում կայացնի, եւ եթե Թորոսյանը մի քիչ էլ ջանք թափի, ապա կհասնի իր նպատակին, ու Ավանեսյանը կհեռացվի: Արսեն Թորոսյանը մտադիր է Անահիտ Ավանեսյանից հետո իր վստահելի մարդուն նշանակել այդ պաշտոնում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար փորձեց կապ հաստատել Արսեն Թորոսյանի հետ, սակայն վերջինս այդպես էլ չարձագանքեց:

ՔՊ-ականները երեկ ԱԺ-ում «մինի խնջույք» են կազմակերպել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանական պատգամավորներն իրենց գործընկերոջ՝ Բաբկեն Թունյանի սենյակում են հավաքվել ու շնորհավորել նրան՝ հորեղբայր դառնալու կապակցությամբ: Տեղեկացանք, որ քիչ թվով պատգամավորներ են եղել եւ համեստ սեղանի շուրջ հավաքվել ու շնորհավորել են Թունյանին:



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նորանշանակ ՆԳՆ նախարարի նշանակումից հետո ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի հրահանգով ՀՀ-ում գործընթաց է մեկնարկել: Մեզ հասած լուրերի համաձայն՝ որոշվել է հանրապետությունում թիկնապահներով ու մի քանի մեքենաներով շրջող անձանց մեքենաները կանգնեցնել ու բերման ենթարկել՝ այդ ճանապարհով արգելելով հանրապետությունում մի քանի մեքենաներով ու թիկնապահներով պտտվելը: Արդեն 4 օր է, ինչ գործընթացը մեկնարկել է: Իսկ ի՞նչն է եղել հրահանգի առիթը: Բանն այն է, որ նոյեմբերի 15-ին կայացած Կառավարության նիստում, Փաշինյանը, խոսելով իրավապահների աշխատանքի մասին, նշել էր, որ դատահրավական համակարգին իրենք տրամադրել են այն ամենը, ինչ պահանջվել է, եւ այժմ ակնկալում են արդյունքներ: Փաշինյանը Կառավարության նիստում նշել էր. «Ես որ գյուղ գնամ՝ նույն բաներից են խոսում, որ «էս մեկից» բոլորը էն ժամանակ վախենում էին, հիմա էլ են վախենում: Նրանք, ովքեր մյուսներին վերեւից էին նայում, էլի անում են նույնը, ու ստացվում է՝ Հայաստանում թույլ իշխանություն է: Կներեք, ուրեմն թույլը ուժային կառույցներն են: Ես թույլ չեմ տա, որ որեւէ մեկը ինձ «թույլ» անվանի»: Ըստ էության՝ այս խոսքերի տողատակերում ազդակներ էին, որոնք ուղղված էին նրանց, ովքեր քաղաքում եւ գյուղերում մի քանի մեքենաներով ու թիկնապահներով են շրջում, անպատժելի են: Կարճ ասած՝ մարդկանց «ասֆալտին փռելու» հերթական փուլն է մեկնարկել:

ԶՐՈՒՅՑ

# «ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՆՎՃԱՐ ԼԻՆԵԼԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է», ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**Վերջին շրջանում քաղաքում իրականացվում են ստորագրահավաքներ՝ տրանսպորտի թանկացման դեմ: Սա այն հարցն է, որն այս պահին ամենաբաստն է հուզում քաղաքացիների մի ստվար հատվածի՝ հաշվի առնելով, որ այն անմիջականորեն ազդելու է քաղաքացիների առօրյա ծախսերի եւ բյուջեի վրա:**

«Ժողովուրդ» օրաթերթը քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանի հետ նոր ներդրված տրանսպորտային վճարման համակարգի, քաղաքում տրանսպորտային կոլապսի եւ քաղաքի ոչ հարմարավետ պլանավորման մասին է զրուցել: Անդրադարձ է կատարվել նաեւ այդ գործընթացներում մարդկային ռեսուրսի պակասին: Հարցազրույցի ընթացքում քննարկվել են ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիները:

**-Պարոն Մնացականյան, մեր թեման կրկին Երեւանն է: Այսօր ցանկանում եմ՝ անդրադառնանք մի խնդրի, որը քաղաքացիների շրջանում արդեն իսկ անհանգստության պատճառ է դարձել, սակայն ուժի մեջ կմտնի հունվարի 1-ից: Խոսքը տրանսպորտային համակարգից օգտվելու համար սահմանված նոր գնացուցակի մասին է: Ըստ Ձեզ՝ այս նոր փոփոխությունը, որի համաձայն տրանսպորտի գինը թանկանում է 3-ից 4 անգամ, արդարացվա՞ծ է՝ հաշվի առնելով մեր տրանսպորտային համակարգը: Ի՞նչ կարող եք ասել:**

-Եթե թույլ կտաք, ես գների վերաբերյալ շատ չեմ խոսի: Եթե հետեւել եք մեր գործունեությանը, ապա նկատած կլինեք, որ վերջին երկու տարիներին մեր հիմնական նախագծերից մեկն այն էր, որ Երեւանը կարող է եւ պետք է ունենա անվճար տրանսպորտ: Քանի որ ինքս շատագովն եմ անվճար տրանսպորտի, ես կցանկանամ, որ երեւանցիներն իմանան, որ դա հնարավոր է, եւ շատ չէի ուզենա մանրանալ այս խճճված վերջին իրադարձությունների մեջ: Նույնիսկ քաղաքապետարանը չի կարողանում քաղաքացիներին, անգամ ավագանու անդամներին բացատրել, թե գնի սանդղակը բարձրացնելու համար ինչ ալգորիթմներով են առաջնորդվում: Վտանգավորն այն է, որ այսօրվա տրանսպորտային, այսպես ասած, բարեփոխումներով զբաղվում են մասնագետ չհանդիսացող մարդիկ: Այսինքն՝ ո՛չ քաղաքապետը, ո՛չ փոխքաղաքապետը, ո՛չ էլ տրանսպորտի վարչության պետը մասնագետներ չեն, հետեւաբար այդ բուրգի տարբեր մարդիկ չեն տիրապետում տրանսպորտային համակարգի կազմակերպմանը՝ թե՛ գիտելիք չունեն, թե՛ տեղեկություն: Ես դեմ եմ տրանսպորտի թանկացմանը: Ասում եմ, որ առնվազն որոշ ժամանակով Երեւանում տրանսպորտը կարող է եւ պետք է լինի անվճար: Հնարավորության դեպքում՝ մշտապես:

**-Քաղաքապետարանը նշում է, որ թանկացումն ուղղված է համակարգի բարելավմանը, սակայն կանգառներում խցանումները նույնն են, ինչ «անհույս գազելների» ժամանակ:**

-Հետեւություններ անելու համար պետք է վերլուծական միտք, գիտելիք եւ տվյալներ: Քաղաքապետարանն այսօր չունի տվյալներ եւ պայքարում է հետեւանքի հետ:

*Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:*

***Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ***

ՇԱՆՐ ԳԻՇԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐԼԱՐՎԱԾ Է

**Թբիլիսիում գրեթե մեկ շաբաթ տեւող ընդդիմության անհնազանդ ցույցերը գիշերը ոստիկանական ուժերի կողմից ուժի կիրառմամբ ցրվել են:**

Թբիլիսիի կենտրոնում գտնվող Ռուսթավելի պողոտայից հեռացվել են ցուցարարները, որոնք ամբողջ գիշեր քարերով եւ այլ առարկաներով հարվածում էին ոստիկաններին, հատուկ ջոկատայիններին եւ խորհրդարանի շենքին: Ցուցարարները կրակում էին նրանց ուղղությամբ պիրոտեխնիկայով՝ հրավառության ճայթուկներով, բարիկադներ էին տեղադրում եւ կրակ վառում, եւ ի պատասխան ցուցարարների՝ Վրաստանի իշխանությունը նրանց նկատմամբ կիրառեց ջրցանների շիթեր եւ արցունքաբեր գազ:

Հիշեցնենք, որ իրավիճակը սրվեց եւ բողոքի ալիքը սկսվեց Վրաստանի իշխանությունների կողմից նոյեմբերի 28-ին ընդունված որոշումից հետո՝ «Օրակարգից հանել Եվրամիությանը երկրի անդամակցության շուրջ բանակցությունների բացումը մինչեւ 2028 թվականը»:

Միաժամանակ իշխանությունները բացատրել են, որ շարունակելու են աշխատել Ասոցացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ, քանի որ դրանից է կախված ԵՄ անդամակցության պատրաստակամությունը:

Ռուսթավելի պողոտայում՝ Վրաստանի խորհրդարանի մոտ, կիրակի՝ ժամը 19:00-ին սկսված բողոքի ակցիան ավարտվել է երկուշաբթի՝ ժամը 07:00-ի սահմաններում: Ոստիկանությունը ողջ գիշեր անցկացրել է գործողություններ՝ ցուցարարներին դուրս մղելով խորհրդարանի շենքի հարակից տարածքից:

Հենց այս պողոտայում ամբողջ գիշեր ցուցարարների եւ ուժայինների միջեւ բախումները շարունակվել են:

Հատուկջոկատայինները կիրառել են արցունքաբեր գազ: Կան ձերբակալվածներ: Ուժայինները Թբիլիսիի կենտրոնում ապամոնտաժել են բարիկադները:

Վրաստանի մայրաքաղաքում հակակառավարական ցույցերի չորս օրվա ընթացքում երկրի ՆԳՆ տվյալներով տուժել է 113 ոստիկան: Նրանցից 4-ը հիվանդանոցում են: Կիրակի՝ երեկոյան Ռուսթավելի պողոտայում խորհրդարանի շենքի առաջ տեղի ունեցող ցույցերին զուգահեռ ցուցարարները շրջափակել էին նաեւ Հանրային հեռարձակողի շենքը:

Այստեղ ընդդիմության կողմնակիցները դժգոհ են հեռուստաալիքի կողմից երկրում ընթացող հանրահավաքների լուսաբանումից, պահանջում են ուղիղ եթեր տրամադրել, հանդիպել ղեկավարության հետ եւ պահանջում էին նրանց հրաժարականը: Արդյունքում, բացի Ռուսթավելու պողոտայից, մասամբ փակվել է նաեւ Հերոսների հրապարակը:

Հանրային հեռարձակողի ղեկավարությունը վերջերս հայտարարություն է տարածել, որում խոսվում է լրագրողների եւ այլ աշխատակիցների նկատմամբ անախադեպ ճնշումների մասին:

Խորհրդարանի եւ Հանրային հեռարձակող խորհրդի շենքերի առաջ տեղի ունեցող ցույցը լուսադեմին դադարեցվել էր:

Այս պահին Ռուսթավելի պողոտայում մեքենաների երթեւեկությունը վերականգնված է:

***Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

## ԲԱՑԱԿԱՅԵԼԸ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Բելառուսի Անվտանգության խորհրդի պետքարտուղար Ալեքսանդր Վոլֆովիչն ասել է, որ Աստանայում կայացած ՀԱՊԿ գագաթնաժողովում Հայաստանի բացակայությունը երկրի համար դրական հեղինակություն չի ստեղծում: Այս մասին գրում է «Սպուտնիկ» գործակալության բելառուսական ծառայությունը:

«Իհարկե, անդամներից մեկի միտումնավոր բացակայությունը Հայաստանի համար դրական հեղինակություն չի ստեղծում», - ասել է Անվտանգության խորհրդի պետքարտուղարը՝ հավելելով, որ դա չի ազդում կազմակերպության ընդհանուր օրակարգի վրա:

ՀԱՊԿ-ի կազմում են Ռուսաստանը, Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Տաջիկստանը եւ Ղրղզստանը: 2024 թվականի հունվարի 1-ից Ղազախստանը նախագահում է ՀԱՊԿ-ում, այնուհետեւ նախագահությունը կանցնի Ղրղզստանին:

## ՈՎ Է ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԵՏԸ

Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության սկզբում քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության նոր պետին՝ Նարեկ Բարսեղյանին:

«Շնորհավորում եմ, պարոն Բարսեղյան»,- ասաց Տիգրան Ավինյանը:

## ԱԺ-Ն ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿՀՐԱՎԻՐԻ

Այսօր՝ դեկտեմբերի 3-ին, գումարվող հերթական նիստերի ավարտից կես ժամ հետո ԱԺ-ն արտահերթ նիստ կհրավիրի: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԱԺ-ից:

Արտահերթ նիստը նախաձեռնել է կառավարությունը:

Օրակարգում 9 հարց է լինելու, այդ թվում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին , Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին նախագծերը, եւ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծն արդեն երկրորդ ընթերցմամբ ընդունելու հարցը:

## ԻՐԱՎԻՃԱԿ

# ԷՐԴՈՂԱՆԸ ԿԱՐՈՂ Է 3-ՐԴ ԱՆԳԱՄ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կարող է 3-րդ անգամ առաջադրվել նախագահի պաշտոնում: Այս մասին X-ում գրել է Թուրքիայի ղեկավարի ավագ խորհրդական Մեհմեթ Ուչումը:

«Եթե խորհրդարանը որոշի արտահերթ ընտրություններ անցկացնել գործող նախագահի կառավարման 2-րդ ժամկետում, ապա նախագահը կարող է կրկին թեկնածու լինել՝համաձայն Սահմանադրության 116.3 հոդվածի», - գրել է Ուչումը:

# ՍԻՐԻԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՎԱԾՆԵՐԻՑ ԿԱ 25 ՋՈՀ

Սիրիայի եւ Ռուսաստանի կողմից իրականացված ավիահարվածների հետեւանքով հակակառավարական ուժերի վերահսկողության տակ գտնվող Իդլիբ քաղաքում առնվազն 25 մարդ է զոհվել: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը՝ վկայակոչելով հակակառավարական ուժերի փրկարար ծառայությունը:

Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը խոստացել է ջախջախել գրոհայիններին, որոնք գրավել են Հալեպ քաղաքը:

«Ահաբեկիչները միայն ուժի լեզուն են հասկանում, եւ հենց այդ լեզվով մենք նրանց կջախջախենք», - մեջբերել են Ասադի խոսքը սիրիական պետական լրատվամիջոցները:

Սիրիայի բանակը նաեւ հայտնել է, որ հետ է գրավել վերջին օրերին հակակառավարական ուժերի կողմից գրավված մի քանի քաղաք:

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին, որը դեկտեմբերի 1-ին այցելել էր Դամասկոս, հայտարարել է, որ իրավիճակը Սիրիայում «բարդ է», սակայն Ասադի կառավարությունը կգերիշխի:

## ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

# ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

**Արդարադատության նախարարության կադրային ջարդին չդիմացավ նաեւ ԱՆ փոխնախարար Կարեն Կարապետյանը, ով որոշում էր կայացրել լքել պաշտոնը՝ նշանակումից գրեթե մեկ տարի անց:**

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արդարադատության նորանշանակ նախարար Սրբուհի Գալյանը կամաց-կամաց ազատվում է իր տեղակալներից:

Այսպիսով, ինչ ունեցվածքով հեռացավ Կարեն Կարապետյանը:

ՀՀ արդադատության փոխնախարար Կարեն Կարապետյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի փետրվարի 22-ին:

Մինչեւ փոխնախարարի պաշտոնը զբաղեցնելը՝ Կարապետյանը 2017-2018 թվականներին եղել է Եվրոպայի խորհրդի՝ «Աջակցություն Հայաստանում դատահրավական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի պատասխանատու:

2019-2022 թվականներին եղել է Եվրոպայի խորհրդի՝ «Փաստաբանի մասնագիտության խթանումը Եվրոպական չափանիշներին համապատասխան» Եվրոպական միության Արեւելյան գործընկերության երկրների տարածաշրջանային ծրագրի ղեկավար:

Արդարադատության ոլորտում չունենալով զգալի կենսագրություն՝ Կարապետյանը եկել է արդարադատության ոլորտ գուցե առանց պատճառի, բայց ոչ պատահական:

Ըստ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ Կարեն Կարապետյանը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակարան շենքում, որից մեկը ձեռք է բերվել 2018 թվականին Արաբկիր վարչական շրջանում, իսկ մյուսը՝ 2020 թվականին ձեռք բերված բնակարանը, նվիրատվություն է, որը գտնվում է Կենտրոն վարչական շրջանում:

ՀՀ արդարադատության փոխնախարարը հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված 2011 թվականի արտադրության Volvo մակնիշի մեքենա:

Փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 2 մլն 965 հազար դրամ, բանկային մնացորդները՝ 6 հազար եվրո եւ գրեթե 1 մլն 800 հազար դրամ:

Փոխնախարարի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 542 հազար դրամ, որից 12 մլն 757 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ արդարադատության նախարարությունից:

Քանի որ Կարեն Կարապետյանը 2022-2023 թվականներին եղել է Եվրոպայի խորհրդի՝ «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի եւ կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» ծրագրի ղեկավարը, ըստ այդմ՝ Եվրոպայի խորհրդից ստացել է 7 հազար եվրո աշխատանքի վարձատրություն:

Հաշվետու տարվա եկամուտներից 1000 եվրոն ապահովագրության փոխհատուցում է Henner GMC-ից, իսկ 22 հազար դրամը փոխառություն է «ՀայէԿոնոմբանկ»-ից:

Փոխնախարարի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 9 մլն 802 հազար դրամ: Վարկային պատմությունից հասկանում ենք, որ բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը կազմել է 21 հազար եվրո:

Արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը հայտարարել է հրաժարականի մասին: Որոշման մասին փոխնախարարը տեղեկացրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում կատարած գրառման միջոցով:

«Որոշում կայացրի ավարտել արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնում իմ աշխատանքները: Ինձ համար մեծագույն պատիվ եւ պատասխանատվություն էր՝ ծառայել մեր երկրին այս կարեւոր պաշտոնում:

Ցանկանում եմ խորին երախտագիտությունս հայտնել այս բացառիկ հնարավորության համար: Առանձնակի շնորհակալություն եմ հայտնում նվիրյալ մասնագետների մեր թիմին, որոնց հետ պատիվ եւ հաճույք էր աշխատել կողք կողքի եւ կիսել այս բարդ ճանապարհը: Իրապես, անչափ հպարտ եմ այն արդյունքներով, որը մենք միասին գրանցել ենք՝ իրավական, դատական եւ հակակոռուպցիոն բարեփոխումների ուղղությամբ: Վստահ եմ, որ այս ջանքերը կշարունակեն ձեւավորել մեր երկրի ապագա իրավական եւ ինստիտուցիոնալ համակարգը եւ կայուն հիմք կհանդիսանան նախարարության նոր թիմի հետագա արդյունավետ աշխատանքների համար:

Ցանկանում եմ նաեւ շնորհակալություն հայտնել մեր բոլոր միջազգային գործընկերներին, որոնք այս ամբողջ ընթացքում կիսել են մեր ձգտումները եւ անվերապահորեն աջակցել մեր բարեփոխումների օրակարգին»,- գրել է փոխնախարարը:

***ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

## ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

# ՀԱՅՑ՝ ԸՆԴԴԵՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՆ-Ի

Ընդդիմադիր պատգամավորները դատական հայց են ներկայացրել ընդդեմ կառավարության եւ ԱԳՆ-ի: Այս մասին տեղեկանում ենք ԱԺ «Հայաստան» խմբակցության անդամ Քրիստինե Վարդանյանի ֆեյսբուքյան էջից:

«Սիրելի՛ հայրենակիցներ, ՋԼՄ հարգելի՛ գործընկերներ, գործընկերներ

Աննա Գրիգորյանի, Գեղամ Մանուկյանի եւ Արթուր Խաչատրյանի հետ համատեղ դատական հայց ենք ներկայացրել ընդդեմ կառավարության եւ ԱԳՆ-ի՝ պահանջելով ոչ իրավաչափ համարել ՀՀ արտգործնախարարի 2024 թ. մարտի 14-ի գրությունը, որով մեզ արգելվել էր ծանոթանալ Ադրբեջանի հետ քննարկվող պայմանագրի փոխանակվող նախագծերին:

Դատարանը՝դատավոր Ռոբերտ Մաքեյանի նախագահությամբ, հայցադիմումը վարույթ ընդունելու որոշում է կայացրել: Նշանակվել է նաեւ նախնական դատական նիստի օր, որը տեղի կունենա 2025 թվականի հունվարի 14-ին:

Մենք հետեւողական ենք լինելու այս կամայական որոշումը չեղարկելու ու հանրության համար հույժ կարեւոր փաստաթղթին ծանոթանալու մեր իրավունքը վերականգնելու հարցում»,- գրել է Վարդանյանը:

# «ԿՇԱՐՈՒՆԱԿԵՄ՝ ՈՐՊԵՍ ԱՆԿԱԽ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ». ԳԵՂԱՄ ՆԱՋԱՐՅԱՆ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունից դուրս եկած պատգամավոր Գեղամ Նազարյանը իր հետագա գործունեությունը կշարունակի որպես անկախ պատգամավոր:

Նա այս մասին ասաց լրագրողների հետ ճեպազրույցում:

««Հայաստան» խմբակցությունում տեղի է ունեցել համատեղ քննարկում, եւ քննարկման արդյունքում որոշվել է, որ շատ ավելի արդյունավետ կլինի, եթե ես շարունակեմ աշխատանքը որպես անկախ պատգամավոր: Խմբակցության հետ հանդիպումից բացի, հանդիպել եմ նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, եւ մենք նույնպես եկել ենք այն եզրահանգմանը, որ ավելորդ խոսակցություններից եւ մեկնաբանություններից խուսափելու համար ճիշտ կլինի, որ ես աշխատեմ որպես անկախ պատգամավոր», - ասաց Նազարյանը:

Նա կոչով դիմել է հանրությանը եւ ակտիվիստներին՝նշելով, որ իր՝ խմբակցությունից դուրս գալը չի նշանակում, որ ինքը պատրաստվում է համագործակցել իշխանական ուժերի հետ:

«Ուղղակի որոշ հասարակական գործիչների, ֆեյսբուքյան ակտիվիստների մի խնդրանք ու կոչ ունեմ՝ չփորձեք խմբակցությունից դուրս գալը եւ անկախ պատգամավորի աշխատանքը ներկայացնել այնպես, որ Գեղամ Նազարյանը անցում է կատարում ՔՊ: Ընդհակառակը, ես լինելու եմ ավելի արմատական ընդդիմադիր պատգամավոր», - ընդգծեց նա:

ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

# ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԸ ՀԱՅՏՆՎԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արթուր Կարապետի Համբարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման Արթիկի բաժանմունքի պետի տեղակալի պաշտոնում, հանդիսանալով պաշտոնատար անձ, ունենալով զինապարտների եւ զինտեխնիկայի հաշվառման, կցագրման եւ ամրագրման, զորամասերը զորահավաքային ռեսուրսներով ժամանակին եւ որակով համալրելու պարտականություն, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ անձնական այլ հաշագրգռվածությունից ելնելով, անցել է իր պաշտոնեական լիազորությունների սահմանները, չարաշահել է պաշտոնեական դիրքը, ինչպես նաեւ, խոչընդոտները վերացնելու եղանակով, օժանդակել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական վերահսկողության ծառայության տեսուչ, պաշտոնատար անձ հանդիսացող Համլետ Դարբինյանին, ռազմական դրության ժամանակ պաշտոնեական լիազորությունների սահմաններն անցնելուն՝ որպիսի գործողություններով էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին:**

«Ժողովուրդ» օրաթերթին նաեւ հայտնի դարձավ, որ Արա Նշանի Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, աշխատելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Արագածոտնի մարզի տարածքային ստորաբաժանման Ապարանի բաժանմունքի պետի պաշտոնում, հանդիսանալով քաղաքացիական ծառայության պաշտոնատար անձ, ունենալով Հայաստանի Հանրապետության զինվորական միավորումներում մշտապես կազմակերպական-տնօրինչական լիազորություններ, մասնավորապես՝ ունենալով պահեստազորում հաշվառված քաղաքացիներին պահեստազորային պատրաստության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին ներգրավելու մասին որոշում կայացնելու լիազորություն, Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, որպիսի գործողություններով էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի՝ Նարեկ Հովհաննեսի Հոխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, հաշվառված լինելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման պահեստազորում՝ որպես զինապարտ, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման համաձայն՝ 2020թ. հոկտեմբերի 31-ին, զորահավաքային միջոցառումներին մասնակցելու նպատակով, պարտավոր լինելով ներկայանալ նշված տարածքային ստորաբաժանում՝ զորահավաքային ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում, չի ներկայացել զինկոմիսարիատ՝ այդ կերպ խուսափելով զորահավաքային զորակոչից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հարություն Հովհաննեսի Հոխանյանին եղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, հաշվառված լինելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման պահեստազորում՝ որպես զինապարտ, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն եւ ընդհանուր զորահավաք հայտարարելու մասին ՀՀ կառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշման համաձայն՝ 2020թ. հոկտեմբերի 31-ին, զորահավաքային միջոցառումներին մասնակցելու նպատակով, պարտավոր լինելով ներկայանալ նշված տարածքային ստորաբաժանում՝ զորահավաքային ծառայությունից ազատվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում, չի ներկայացել զինկոմիսարիատ՝ այդ կերպ խուսափելով զորահավաքային զորակոչից:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## 4-ԱՄՅԱ ԵՐԵԽԱՅԻ ՄԱՀՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Երեւանում 4-ամյա երեխայի մահվան դեպքով այս պահին իրավապահները սպասում են դատաբժշկի պատասխանին, որ հասկանան, թե երեխայի մահը ինչից է վրա հասել: Սակայն նախնական տեղեկությունների համաձայն՝ մանկապարտեզի անձնակազմը իրավապահներին ասել է, որ երեխան ուշագնաց է եղել, որից հետո նրան շտապ հասցրել են հիվանդանոց: Իսկ թե ինչու է ուշագնաց եղել, կամ ինչ է կատարվել, այս ամենի վերջնական պատասխանը կարող է տալ դատաբժշկական փորձաքննությունը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ երեկ՝ դեկտեմբերի 2-ին, առեղծվածային ու ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 11:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արաբկիրի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ «Արաբկիր» բժշկական կենտրոն երեխա է տեղափոխվել, ով մահացել է:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց են ժամանել ոստիկանության Արաբկիրի բաժնի պետ Ռուբեն Ներսիսյանն ու բաժնի պետի տեղակալ Սերգեյ Մամիկոնյանը:

Ոստիկանները պարզել են, որ երեխան աղջիկ է՝ 4 տարեկան, ով շտապօգնության ավտոմեքենայով նշված բժշկական կենտրոն է տեղափոխվել ծայրահեղ ծանր ախտորոշմամբ՝ Կիեւյան 5 հասցեում գործող թիվ 28 մանկապարտեզից:

Դեպքի փաստով «սպանութուն» հատկանիշներով Արաբկիրի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

4-ամյա երեխայի դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին ՀՀ ՆԳՆ-ից: ՆԳՆ-ից հայտնել են նաեւ, որ ըստ իրենց հասած տեղեկությունների՝ երեխան վերջին շրջանում վատառողջ է եղել, հրաժարվել է սնդից:

## ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազությունը պահանջում է բռնագանձել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի նախկին դեկան Գագիկ Ղազինյանի եւ նրա հետ փոխկապակցված անձանց գույքը:

«Դատալեքս» դատական-տեղեկատվական համակարգից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է, որ դատախազությունը նոյեմբերի 29-ին հայց է ներկայացրել Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարան՝ ընդդեմ Գագիկ Ղազինյանի, Կարինե Շահբազյանի եւ Դավիթ Գագիկի Ղազինյանի: Թե ինչ չափի գույք է պահանջում դատախազությունը բռնագանձել՝ դեռեւս հայտնի չէ: Հայցը մակագրվել է դատավոր Աշխեն Ղարսլյանին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԻՆՉՈՒ ՋՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԱԶԱՏՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

**Այս տարվա սեպտեմբերի 9-ին Սասուն Բաղասյանն ազատվել է ՀՀ ԶՈՒ 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից: Փաստաթղթում նշվում էր, որ հիմք է ընդունվել վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունը: Բաղասյանը 5-րդ բանակային կորպուսի հրամանատար էր նշանակվել 2023թ. փետրվարի 17-ին:**

Եվ այսպես՝ Նիկոլ Փաշինյանի այս որոշումից ArmLur.am-ին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել:

Արտակ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2024 թվականի հունիսի 7-ից ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 952 հրամանով ընդգրկված լինելով մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայություն անցած զինծառայողների ատեստավորման անցկացման համար ստեղծված՝ 10 անդամից ձեւավորված 10-րդ ատեստավորման հանձնաժողովի անդամ, հանդիսանալով պաշտոնատար անձ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 5-րդ բանակային կորպուսի հրամանատար Սասուն Բաղասյանի եւ ՀՀ պաշտպանության նախարարության զորամասի մարտական պատրաստության բաժնի պետ Վարդան Մսրյանի հետ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ չարաշահել են իրենց իշխանական լիազորությունները, ինչպես նաեւ Սասուն Բաղասյանի եւ Վարդան Մսրյանի հետ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ կատարել են պաշտոնեական կեղծիք:

Վարդան Մսրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2024 թվականի հունիսի 7-ից ՀՀ պաշտպանության նախարարի թիվ 952 հրամանով նաեւ ընդգրկված լինելով մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայություն անցած զինծառայողների ատեստավորման անցկացման համար ստեղծված՝ 10 անդամից ձեւավորված 10-րդ ատեստավորման հանձնաժողովի անդամ, հանդիսանալով պաշտոնատար անձ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 5-րդ բանակային կորպուսի հրամանատար՝ Սասուն Բաղասյանի եւ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ֆիզիկական պատրաստության եւ սպորտի ծառայության ֆիզիկական պատրաստության բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Արտակ Գրիգորյանի հետ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ չարաշահել են իրենց իշխանական լիազորությունները, ինչպես նաեւ Սասուն Բաղասյանի եւ Արտակ Գրիգորյանի հետ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ կատարել են պաշտոնեական կեղծիք:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյ. 29-ից դեկտ. 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 209 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆԱԽԱՏԵԼ Է ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԻՆ

Նոյեմբերի 23-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը այցելել է Տավուշի մարզ, եղել հայրենի Իջեւան քաղաքում: Նա դրանից հետո քննադատական հայտարարություններ է արել ճանապարհների եզրին գործող ավտոլվացման կետերի, գետ թափվող փրփրաջրերի, ճանապարհի եզրին կուտակված զանազան աղբի, շինանյութերի եւ այլնի մասին: Տավուշի մարզպետարանի աղբյուրը հայտնեց, որ Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզի ճանապարհների եզրերին տիրող վատթար իրավիճակի վերաբերյալ նախատել է իր դասընկեր, իր հարսանիքի քավոր, իր որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին: Այդ հանդիմանությունից հետո մարզպետ Ղալումյանը գործի է անցել. նա նոյեմբերի 26-ին դիմել է բնակիչներին, խնդրել եւ հորդորել է հանրային տարածքներից հեռացնել բնակիչների կողմից կուտակած շինարարական նյութերը, շինաղբը եւ մետաղի ջարդոնի վերածված ավտոմեքենաները, որոնք խոչընդոտում են հետիոտնի եւ տրանսպորտային միջոցների երթեւեկությանը: Մարզպետարանը զգուշացրել է. «Տեղեկացնում ենք, որ նշված գործողությունները չկատարելու դեպքում՝ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից կձեռնարկվեն օրենքով սահմանված միջոցառումներ»: Դրանից հետո՝ նոյեմբերի 27-ին, մարզպետ Հայկ Ղալումյանը որոշել է աղբահանության, սանիտարական մաքրման եւ ծառայությունների մատուցման որակի բարելավման նպատակով հանձնաժողով ստեղծել: Հանձնաժողովի մեջ ընդգրկվել են մարզպետարանի պաշտոնյաներ եւ մարզի համայնքների Իջեւանի, Նոյեմբերյան, Բերդի եւ Դիլիջանի կոմունալ ծառայությունների ղեկավարները( իրենց համաձայնությամբ): Այդ հանձնաժողովը պետք է իրականացնի մարզով անցնող միջպետական եւ հանրապետական ավտոճանապարհների եզրերին ու բնակավայրերի ներսում կուտակված աղբի, շինարարական աղբի, տեսանելի տարածքներում կուտակված հին ու անարդյունավետ գույք հանդիսացող տրանսպորտային միջոցների կմախքների ու դրանց տարբեր մասերի, չորացած ու թափված փայտանյութի, ինչպես նաեւ այլ տեսակի աղբը հավաքելու, դրանց տեղափոխումն ու տեղադրումն աղբավայրերում կազմակերպելու գործընթացներ եւ կատարված աշխատանքների մասին պարբերաբար զեկուցի Տավուշի մարզպետին:

### ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՋԱՐԴՎԱԾ ԵՆ

Տուրիստական Դիլիջան քաղաքի կենտրոնում, միջպետական ավտոճանապարհից՝ ավտոկայարանի մոտից դեպի Մյասնիկյան փողոց՝ համայնքապետարանի շենք տանող վերեւ բարձրացող աստիճանների մի մասը ջարդված է: Զբոսաշրջային Դիլիջան այցելող զբոսաշրջիկները լուսանկարում են այդ ջարդված, չնորոգվող աստիճանները: Մեծ բյուջե տնօրինող Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը չի՞ տեսնում ջարդված աստիճանները, որ դրանք նորոգելու հրահանգ տա:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՍԻՐԻԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

**Սիրիայում պատերազմը կրկին ակտիվ փուլ է մտել: Իսլամիստները, որոնք, մեծամասամբ, ֆինանսավորվում են Թուրքիայի կողմից, գրավել են Հալեպի նահանգի մեծ մասը եւ առաջ են շարժվել դեպի մայրաքաղաք Դամասկոս: Համասից հյուսիս ռուսական օդուժը եւ սիրիական բանակը հարվածներ են հասցրել զինյալներին, որից հետո բանակի եւ ահաբեկիչների միջեւ մարտեր են սկսվել:**

Մարտական գործողություններին արդեն առերեւույթ մասնակցություն ունի թուրքական կողմը՝ մարտի մեջ մտցնելով թուրքական Bayraktar TB2 տեսակի ԱԹՍ-ները: Թուրքական ներկայությունը ապացուցող փաստերն այնքան շատ են, որ նույնիսկ անիմաստ է հերքել: Հալեպի բերդի վրա ծածանվող Թուրքիայի դրոշներից մինչեւ հագուկապ, զինամթերք եւ աշխատավարձ «Հայաթ Թահրիր ալ Շամ» խմբավորմանը, Թուրքիայի պետական դրոշ եւ Էդողանի նկար՝ «Ֆաջ ալ Հյուրիյա» խմբավորման շտաբում:

Կառավարական բանակին աջակցելու նպատակով Սիրիա են ժամանել իրաքյան դիմադրության 20 հազար մարտիկներ եւ իրանամետ զինված խմբավորումներ:

Վերջին չորս օրերին ակտիվ քարոզչություն է ընթանում նաեւ թուրքական մամուլում: Հեռուստաեթերում հստակ ցուցադրվում է Օսմանյան կայսրության 1899 թվականի քարտեզը, որում Հալեպի նահանգը հին օսմանյան Հալեպի վիլայեթն է: Թուրքիայի ապագայի քարտեզն այսօր տարածվում է ո՛չ միայն թուրքական մամուլում, այլեւ թուրք գործիչների անձնական էջերում: Այդ հրապարակումները հիշեցնում են Քեմալ Աթաթուրքի «Ազգային ուխտը», որի համաձայն՝ Հալեպը պիտի դառնա Թուրքիայի 82-րդ նահանգը: Վերոնշյալ քարտեզներում, ընդ որում, Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ մտնում է Թուրքիայի տարածքի մեջ՝ Արցախը թողնելով Ադրբեջանին:

*Իսկ ի՞նչ է կատարվում Հալեպում*

Ահաբեկիչները հայտնել էին, որ քաղաք մտնելիս քրիստոնյաներին, հայերին եւ, առհասարակ, խաղաղ բնակչությանը ձեռք չեն տալու եւ միասին Սուրբ Ծնունդ են նշելու: Սակայն հայտարարություններից 24 ժամ էլ չանցած հայտնի դարձավ հայ բժշկի մահվան մասին, ով դիպուկահարի կրակոցից ստացած վնասվածքից հետո հիվանդանոցում գիտակցության չգալով՝ մահացել էր:

Քիչ թվով հայերի հաջողվել է դուրս գալ Հալեպից եւ անցնել Դամասկոս, սակայն հայերի մեծ մասն այս պահին Հալեպում է: Առաջնորդարանը զգուշացրել է հնարավորության դեպքում դուրս չգալ տնից՝ խուսափելով քաղաքում շրջող զինյալների հետ առերեսվելուց:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության հումանիտար առաքելություն իրականացնող մասնագիտական խմբին, ապա խումբը նոյեմբերի 29-ին ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը եւ անվտանգ դուրս բերվել Հալեպից:

Միաժամանակ Հալեպից Դամասկոս է մեկնել ՀՀ գլխավոր հյուպատոսը՝ այդ մասին առանց տեղեկացնելու համայնքին: ՀՀ ԱԳՆ-ն հայտնել է, որ հյուպատոսը աշխատանքային այցով մեկնել է Դամասկոսում գտնվող ՀՀ դեսպանություն եւ չի կարողացել վերադառնալ:

Առաջիկա օրերը որոշիչ են ոչ միայն Սիրիայի համար, այլեւ տարածաշրջանի, տարածաշրջանում թուրքական ազդեցության եւ Թուրքիա պետության փաստացի հաստատման տեսանկյունից, ինչը կարող է ամբողջությամբ փոխել պատկերը Մերձավոր Արեւելքում եւ Հարավային Կովկասում ու ճակատագրական լինել բոլորիս համար:

*ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ*

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### ԼԱՐՍՈՒՄ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՎԱԾԱՀԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ Է

Առատ ձյան եւ եղանակային վատ պայմանների պատճառով արգելափակվել է Վերին Լարսի ճանապարհը: Արդեն 5-րդ օրն է՝ Վերին Լարսը փակ է, եւ 863 հայկական բեռնատար սպասում է հերթում:

«Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած վարորդները պնդում են, որ այս թիվը հասնում է մոտ 1000-ի:

Ճանապարհը բաց է, սակայն տեղ-տեղ մերկասառույց է, ինչն էլ մեծ խցանումներ է առաջացրել: Ընդհանուր առմամբ, դեկտեմբերի 1-ի դրությամբ երթեւեկությունը շարունակելուն սպասում է ավելի քան 3,3 հազար բեռնատար:

Ականատեսները հայտնում են ռուս-վրացական սահմանի երկու կողմերում ծանր իրավիճակի մասին: Մոսկվայի ժամանակով դեկտեմբերի 1-ին՝ ժամը 21:55-ին, Վերին Լարսի անցակետում 3429 մեքենաների վարորդներն ու ուղեւորները սպասում են Վրաստան մեկնելու թույլտվության, ասվում է Հյուսիսային Օսիայի Երթեւեկության կառավարման կենտրոնի կայքում:

Միջազգային Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի Գուդաուրի-Կոբի հատվածում Լարսով ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար, սակայն վատ եղանակի եւ ճանապարհի տարբեր հատվածներում հետընթաց երթեւեկության պատճառով կուտակումները պահպանվում են:

Վիճակագրության համաձայն՝ օրական Վերին Լարսով անցնում է մոտ 150 հայկական բեռնատար:

Հիշեցնենք, որ Վրաստանի ռազմական ճանապարհը միակ գործող ցամաքային ճանապարհն է, որը կապում է Հայաստանը Ռուսաստանի հետ (Վրաստանով):

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

### ՔԱՆԻ ԱՐՑԱԽՑԻ Է ՍՏԱՑԵԼ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 6338 անձ: Այս պահի դրությամբ մոտ 4400 մարդու քաղաքացիություն է տրվել: ԱԺ-ում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց խնդիրներին առնչվող քննարկման ժամանակ այս մասին հայտնեց ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը:

Նրա խոսքով՝ այս դեպքում չեն հաշվարկվում անչափահասները, որովհետեւ ծնողների քաղաքացիության ձեռքբերումից հետո նրանք օրենքի ուժով այդ քաղաքացիությունը ձեռք են բերում զուտ անձնագրավորման ճանապարհով եւ անհրաժեշտ չէ հավելյալ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթաց անցնել:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 44 պատահար. 1 մարդ զոհվել է, 65-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՖԱՍԹԵՔՍ» ԵՎ ԵՊՀ

# ՀԱՄԱՏԵՂ ԴԱՍԸՆԹԱՑ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Ս.թ. նոյեմբերի 22-ին Պարոնյան 16/2 հասցեում գտնվող ftNfFT ֆիջիթալ սփեյսում ամփոփվել է «Բլոկչեյն տեխնոլոգիաների հիմունքներ. կրիպտո հավելվածների կիրառությունը» թեմայով կարճաժամկետ դասընթացների շարքը: Մասնակիցներն ստացել են NFT-ների տեսքով հավաստագրեր: Միջոցառմանը ներկա են եղել Fastex-ի համահիմնադիր Վիգեն Բադալյանը, գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը եւ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Վախթանգ Աբրահամյանը, անդրադառնալով դասընթացներին, իր խոսքում նշել է. «Սա համատեղ նախաձեռնությունների սկիզբն էր. մենք ունենք ապագայի մեծ ծրագրեր՝ սկսած մագիստրոսական կրթական ծրագրից մինչեւ համատեղ հետազոտությունների կատարում»:

Համագործակցության հուշագրի շրջանակում անցկացված երկամսյա դասընթացի շրջանակում անդրադարձ է կատարվել բլոկչեյն տեխնոլոգիաներին եւ կրիպտոգրաֆիկայի հիմունքներին, DeFi (ապակենտրոնացված ֆինանսական հավելվածներ) եւ թվային ակտիվների առանձնահատկություններին, Web3-ում առկա ռիսկերին, անվտանգության մեխանիզմներին եւ կիրառելիությանը, ինչպես նաեւ ոլորտում առկա օրենսդրական կարգավորումներին:

Դասընթացները վարել են Web3 ոլորտում միջազգային փորձ ունեցող մասնագետներ Վախթանգ Աբրահամյանը («Fastex»-ի գործադիր տնօրեն), Վարդան Խաչատրյանը («Fastex»-ի իրավաբանական գծով տնօրեն եւ տնօրենների խորհրդի անդամ), Արամ Ջիվանյանը («Fastex»-ի խորհրդական), Կարեն Թերջանյանը («Bahamut» բլոկչեյնի գլխավոր նախագծող), Պավել Արամյանը («Bahamut» բլոկչեյնի ծրագրի ղեկավար), Արմեն Բաղդասարյանը («Fastex»-ի համագործակցությունների գծով ղեկավար): Ի լրումն հիմնական դասընթացավարների նյութին՝ ուսանողները հնարավորություն են ունեցել լսելու նաեւ հրավիրյալ բանախոսների ելույթները: Այս ամիսների ընթացքում ուսանողները մասնագիտական պրակտիկա են անցել «Ֆասթեքս»-ում: Առջեւում մագիստրոսական կրթական ծրագիրն է, որի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Դասընթացների նպատակն էր զարգացնել կրթության եւ գիտության, մասնավորապես՝ բլոկչեյնի եւ վիրտուալ ակտիվների ոլորտը Հայաստանի Հանրապետությունում: «Ֆասթեքս»-ը պատրաստակամ է ներդնել անհրաժեշտ ջանքեր՝ ապահովելու մասնագիտական բարձր որակի կրթություն երիտասարդների շրջանում:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՋԱԽՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

**«Թատրոնն սկսվում է հանդերձարանից». 1933 թվականին Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական թատրոնի հանդերձապահներին ուղղված Ստանիսլավսկու նամակի հիշյալ տողերից ծնվեց թեւավոր խոսքը: Մշակութային վայրն սկսվում է ոչ միայն հանդերձարանից, մշտապես թարմացվող ու հարուստ խաղացանկից, այլեւ ազդագրից ու սանհանգույցից: Խորհրդային միության փլուզումից հետո Հայաստանի մշակութային վայրերի սանհանգույցները հայտնվեցին սանիտարահիգիենիկ վատթար վիճակում: Տարիներ շարունակ որոշներն ընդհանրապես, որոշներն էլ մասամբ վերանորոգվել էին՝ շարունակելով մնալ հանդիսատեսի համար ոչ պատշաճ պայմաններում:**




«Ֆասթ» բանկը՝ բանկի խորհրդի նախագահ, «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր Վահե Բադալյանի նախաձեռնությամբ ստանձնեց Հայաստանի մշակութային վայրերի՝հատկապես թատրոնների սանհանգույցների վերանորոգման, արդիականացման գործընթացը:

«Այս գաղափարն առաջացավ այն ժամանակ, երբ մենք նկատեցինք, որ մշակութային հաստատություններում սանհանգույցներն այդքան էլ լավ վիճակում չեն: Ես կարծում եմ, որ մշակութային օջախներում ամեն ինչ պետք է լինի կատարյալ, նույնիսկ սանհանգույցները: Շինարարության ընթացքում օգտագործել ենք միայն հայկական քար, տրավերտին, լույսերը, կանթեղներն, ջահերը դարբնի ձեռքի աշխատանք են: Ամեն ինչ կառուցվել է հայկական ոճով», - ասել է «Ֆասթ» բանկի խորհրդի նախագահ, «Բադալյան եղբայրներ» ընկերությունների խմբի համահիմնադիր Վահե Բադալյանը:

«Ֆասթ» բանկի աջակցությամբ վերանորոգվել են Արամ Խաչատրյան համերգասրահի, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի, Բոհեմ եւ Ազգային տիկնիկային թատրոնի սանհանգույցները: Ընդհանուր առմամբ «Ֆասթ» բանկն ստանձել էր 11 մշակութային վայրի սանհանգույցների վերանորոգումը:

«Համաշխարհային թատրոնի պատմության մեջ մեկենասները միշտ շատ լուրջ դերակատարում են ունեցել: Եվ փառք Աստծո, որ կան մասնավոր ընկերություններ, ովքեր աջակցում են մշակութային օջախներին, վերանորոգում սանհանգույցները: Շնորհակալություն «Ֆասթ» բանկին, որ մեր սանհանգույցները գտնվում են իդեալական վիճակում: Մենք շատ ենք կարեւորում մեր հանդիսատեսի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ իրենք իրենց լավ զգան», - ասել է Կ. Ստանիսավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի տնօրեն Սուրեն Շահվերդյանը:

«Ֆասթ» բանկի ֆինանսավորմամբ մինչեւ տարեվերջ կավարտվեն նաեւ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի եւ Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի սանհանգույցները:

Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի սանհանգույցները վերջին անգամ վերանորոգվել էին 2002 թվականին: Թատրոնի գեղարվեստական ղեկավարի խոսքով՝ վերանորոգումից հետո էլ պահպանվել էր խորհրդային տարիներից եկած ասիական ոճը, չկար տաք ջուր, սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ:

«Երբ բիզնեսը եւ մշակույթը համագործակցում են եւ միասին են շարժվում, շահում են երկուստեք: Սա խոսում է «Ֆասթ» բանկի բարձ մակարդակի մասին: Մտածողության մասին, որը չի սահմանափակվում զուտ բանկային գործունեությամբ, այլ հասկանում է, թե ինչքան կարեւոր է, որ մեր երկիրը լինի հրապուրիչ բոլոր ասպարեզներում», - նշել է Ազգային տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանը:

Չափագրման եւ դիզայնի փուլում են գտնվում նաեւ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի , Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի, Գյումրու եւ Կապանի թատրոնի սանհանգույցները:

«Շատ շնորհակալ եմ «Ֆասթ» բանկին: Մեզ համար շատ կարեւոր էր սա, շատ-շատ կարեւոր էր: Մենք մասնավոր թատրոն ենք, եւ մեր համար շատ դժվար էր», - պատմել է «Բոհեմ» թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարեկ Դուրյանը:

Բանկի կողմից մշակութային նախագծերին աջակցությունը պարբերական բնույթ է կրում եւ Բադալյանների ընտանիքին պատկանող ընկերությունների խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կարեւոր մաս է:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

## «ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԸ՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

«Կոնվերս» բանկն արժանացել է VISA միջազգային համակարգի «Innovation of the year» պատվավոր մրցանակին: Այն Բանկին է հանձնվել նոյեմբերի 22-ին՝Visa Cashless Forum-ի շրջանակում: Անվանակարգում հաղթողը որոշվել է այնպիսի չափորոշիչների հիման վրա, ինչպիսիք են նորարարական, թվային պրոդուկտների, ծառայությունների մշակումն ու ներդրումը:

«Թվային փոխակերպումը, ժամանակակից ու նորարար պրոդուկտների ներդրումը, թվային լուծումների շնորհիվ բանկային ծառայությունների որակի ու անվտանգության ապահովումը, գործընթացների արդյունավետության բարձրացումը «Կոնվերս» բանկի ռազմավարական առաջնահերթությունն են: Շնորհակալություն ենք հայտնում VISA-ին երկարամյա համագործակցության համար եւ թվային փոխակերպման, նորարարական ծառայությունների եւ լուծումների ուղղությամբ բանկի ջանքերը բարձր գնահատելու համար»,- ասել են «Կոնվերս» բանկում:

Նշվել է, որ վերջին տարիներին թվային փոխակերպման շրջանակում բանկն իրագործել է մի շարք կարեւոր նախագծեր, այդ թվում՝ Converse Mobile-ի թարմացված՝ ավելի լայն հնարավորություններով ու լուծումներով տարբերակի գործարկումը, C360 պրոդուկտային հարթակը, բիզնեսի ֆինանսավորման հարթակը, գործընթացների թվայնացումը:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

## ԵՐԵՎԱՆ–ՄՈՍԿՎԱ ԱՎԻԱՑՈՒՄՍԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը հաճախ է անդրադառնում Երեւան-Մոսկվա ավիատոմսերի արժեքին: Այս անգամ հետաքրքրվել ենք, թե ձմռան առաջին ամսին ի՞նչ արժեն այդ ուղղությամբ ավիատոմսերը:

Այսպիսով՝ ամսվա առաջին օրը՝ դեկտեմբերի 1-ին, FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե թռիչքը արժեցել է 56.890 դրամ, Ural Airlines-ում 3 ժամ 20 րոպե ուղիղ թռիչքը՝ 58. 500 դրամ: SuperKassa-ում 20 ժամ 30 րոպե ոչ ուղիղ թռիչքը 67.320 դրամ է:

Դեկտեմբերի 2-ին՝ երկուշաբթի նույն SuperKassa-ում 16 ժամ 45 րոպե ոչ ուղիղ թռիչքը 54.820 դրամ է եղել: FlyOne-ում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքը՝56.890 դրամ: Azimuth ավիաընկերությունում՝ 60.200 դրամ:

Այսօր՝դեկտեմբերի 3-ին, FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքի արժեքը 53.200 դրամ է, 3 ժամ 20 րոպեն կրկին նույն արժեքն ունի: Azimuth ավիաընկերությունում 28 ժամ 50 րոպե թռիչքի ավիատոմսի արժեքը 66.000 դրամ է:

Արդեն դեկտեմբերի 4-ին FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե ուղիղ թռիչքը կարժենա 48.460 դրամ, իսկ 3 ժամ 20 րոպեն՝52.680 դրամ:

Դեկտեմբերի 5-ին կրկին FlyOne ավիաընկերությունում 3 ժամ 10 րոպե թռիչքը 48.460 դրամ է: Azimuth-ում 3 ժամ 30 րոպեն՝ 53.330 դրամ, իսկ City.Travel-ում 19 ժամ 40 րոպե ոչ ուղիղ թռիչքը՝ 57.700 դրամ:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

# ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԴԵԼՓՅԱՆ ԽԱՂԵՐԻՑ

**Ռուսաստանի Դաշնության Կոմի Հանրապետության Սիկտիվկար քաղաքում անցկացվել են 3-րդ երիտասարդական բաց Արկտիկական եւ ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերը՝ 10 անվանակարգերում:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ Հայկական ազգային Դելփյան կոմիտեի (ՀԱԴԿ) մասնագիտական ընտրությամբ խաղերին մասնակցել է նաեւ ՀՀ պատվիրակությունը՝ 6 մասնակցով՝ դաշնամուր, ջութակ, ժողովրդական նվագարաններ եւ կերպարվեստ անվանակարգերում: ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված են նաեւ Հայկական ազգային Դելփյան կոմիտեի (ՀԱԴԿ) նախագահ Ալեքսան Ջաքյանն ու 2 նվագակցող:

Հայաստանի ներկայացուցիչները 3-րդ երիտասարդական բաց Արկտիկական Դելփյան խաղերում նվաճել են 2 ոսկե եւ 2 արծաթե մեդալներ, 2 դիպլոմ.

Դաշնամուր անվանակարգ (10-13 տարեկան)

Էդուարդ Սիմոնյան, դաս.՝ Լ. Մկրտչյան - արծաթե մեդալ

Դաշնամուր անվանակարգ (14-17 տարեկան)

Էլեն Խաչիկյան, դաս.՝ Մ. Մարգարյան - ոսկե մեդալ

Ջութակ անվանակարգ (14-17 տարեկան)

Էդուարդ Դայան, դաս.՝ Է. Թադեւոսյան - ոսկե մեդալ

Ժողովրդական նվագարաններ (18-25 տարեկան)

Լիլիթ Պետրոսյան, դաս.՝ Ծ. Հովհաննիսյան - արծաթե մեդալ

Ժողովրդական նվագարաններ (14-17 տարեկան)

Նարեկ Խանզադյան, դաս.՝ Գ. Դաբաղյան - Դիպլոմ

Կերպարվեստ (14-17 տարեկան)

Գոհար Գրիգորյան - Դիպլոմ

ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերում Հայաստանն ունեցել է երեք 1-ին եւ մեկ

2-րդ մրցանակակիրներ:

Դաշնամուր անվանակարգ (10-13 տարեկան)

Էդուարդ Սիմոնյան, դաս.՝ Լ. Մկրտչյան - առաջին մրցանակ

Դաշնամուր անվանակարգ (14-17 տարեկան)

Էլեն Խաչիկյան, դաս.՝ Մ. Մարգարյան - առաջին մրցանակ

Ջութակ անվանակարգ (14-17 տարեկան)

Էդուարդ Դայան, դաս.՝ Է. Թադեւոսյան - առաջին մրցանակ

Ժողովրդական նվագարաններ (18-25 տարեկան)

Լիլիթ Պետրոսյան, դաս.՝ Ծ. Հովհաննիսյան - երկրորդ մրցանակ

ԱՊՀ մասնակից պետությունների 18-րդ երիտասարդական Դելփյան խաղերի թիմային հաշվարկով ՀՀ պատվիրակությունը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը:

Խաղերին մասնակցել են շուրջ 600 տաղանդավոր պատանիներ եւ երիտասարդներ 13 պետություններից՝ ԱՊՀ անդամ պետություններից, ինչպես նաեւ ԲՐԻԿՍ-ի եւ ՇՀԿ-ի ներկայացուցիչներ: Հանդես են եկել Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Ադրբեջանի, Չինաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Իրանի եւ Բենինի պատվիրակությունները:

3-րդ երիտասարդական բաց Արկտիկական Դելփյան խաղերի ընթացքում կազմակերպվել է նաեւ միջազգային կոնֆերանս, որի շրջանակում ՀԱԴԿ նախագահ Ալեքսան Ջաքյանը հանդես է եկել զեկույցով, իսկ ՇՀԿ շրջանակում կազմակերպված «Մշակույթը, որպես հարթակ բազմակողմանի համագործակցության եւ զարգացման համար» կլոր սեղանին ներկայացրել է «Միացյալ ազգերը հանուն խաղաղության նվագախումբ եւ երգչախումբ» ծրագիրը:

*ՀՀ ԿԳՄՍՆ*

### ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## ՍԿԱՆԴԱԼ ՀԱՅ ԵՐԳՉՈՒՀՈՒ ԵԼՈՒՅԹԻՑ ՀԵՏՈ

Օրերս համացանցում ակտիվ քննարկվում է մոսկվայաբնակ 17 ամյա հայուհու՝ Էլեն Բադալյանի հաղթանակը «Դե՛, բոլորս միասին» (Ну-ка, все вместе!) հաղորդման ժամանակ:

Էլեն Բադալյանը 7 տարեկանից զբաղվել է պրոֆեսիոնալ վոկալով եւ ինքն է իր երգերի հեղինակը:

Մրցույթում հաղթելուց հետո Էլեն Բադալյանը ստացել է հաղորդման արձանիկը եւ 5 միլիոն ռուբլի դրամական պարգեւ:

Չնայած նրան, որ հայուհու ելույթը տպավորել է շատերին՝ այն այդքան էլ հեշտ չի եղել, քանի որ դահլիճում գտնվող ժյուրիից ոչ բոլորն են ի սկզբանե ցանկացել սեղմել կոճակը՝ մասնակցի կատարման հավանությունը նշանակող:

Բանն այն է, որ ժյուրիից երգիչ Սերգեյ Լազարեւը հորդորել է 17 ամյա Էլեն Բադալյանին կատարել Պոլինա Գագարինայի «Ты не целуй» երգը: Նրա ելույթի ընթացքում Սերգեյ Լազարեւը չդիմացավ եւ բարկությունից սեղմեց հատուկ հյուրի՝ Ֆիլիպ Կիրկորովի կոճակը, ով ոտքի չկանգնեց Էլենի ելույթի ժամանակ:

Սերգեյ Լազարեւը Էլեն Բադալյանի ելույթի ժամանակ Ֆիլիպ Կիրկորովի հետ սկանդալից հետո հեռանում է «Ну-ка, все вместе!» հեռուստաշոուից: Սերգեյ Լազարեւը «Ռոսիա 1» հեռուստաալիքի եթերում հայտարարել է, որ այլեւս չի մասնակցի շոուին:

Լազարեւը բացատրել է իր դիրքորոշումը՝ նշելով, որ վեցերորդ եթերաշրջանը չափազանց զգացմունքային էր: «Շատ շնորհակալ եմ աշխատանքի համար, շատ շնորհակալ եմ այս վեց սեզոնների համար: Ցավոք, ինձ համար շատ դժվար է յուրաքանչյուր եթերին էմոցիոնալ կերպով տրվելը, այդ պատճառով ես, այնուամենայնիվ, որոշում կայացրի հեռանալ: Կներեք, ի սեր Աստծո, սա իմ վերջին մրցաշրջանն է: Մենք միասին շատ բան ենք անցել, բոլորդ ինձ համար սիրելի մարդիկ եք», - շոուի եթերում հայտարարել է նա:

## ԻՆՉ ԵՂԱՎ 27 ՕՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. «ԳՈՅ»

Արդեն 27 օր է, ինչ շարունակվում է «Գոյ» թատրոնի նախաձեռնած նստացույցը, որով պահանջում են վերականգնել արդարությունը, այսինքն՝ աշխատելն ու արարելն իրենց մայր թատրոնում:

Իսկ ի՞նչ է կատարվել 27 օրերի ընթացքում.

Նստացույցի 27 օրերի ընթացքում «Գոյ» թատրոնի ստեղծագործական անձնակազմը իրականացրել է տարբեր ակցիաներ՝ բարձրաձայնելով իրենց խնդիրը: «Գոյ»-ի անձնակազմն այս օրերի ընթացքում գնացել է դատախազություն, ՄԻՊ, ոստիկանություն, նաեւ հանդիպել ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանի հետ, սակայն չեն ստացել իրենց խնդրի լուծումը:

Կառավարման խորհրդի նախագահ, ռեժիսոր Սարգիս Արզումանյանի խոսքով՝ այս ամենը կոնկրետ քայլ է՝ իրենց «դրսում» թողնելու համար:

Նշենք, որ դեկտեմբերի 8-ին «Գոյ» թատրոնի ծննդյան օրն է, իսկ վերջերս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Սարգիս Արզումանյանն ասել է. «Դեկտեմբերի 8-ին մեր թատրոնի ծննդյան օրն է, որը նախապատրաստվում ենք դրսում նշել: Գոնե մինչեւ դեկտեմբերի 8-ը մեր թատրոնի դռների դիմաց ենք լինելու, ակցիաները շարունակվելու են, միայն նստացույցով չենք բավարարվի, կունենանք ճյուղավորված այլ գործողություններ, հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, հանրային միջոցառումներ, ներկայացումներ: Եթե քաղաքապետարանից ստանանք համապատասխան թույլտվություն, փորձելու ենք մեր նստացույցը տեղափոխել ԿԳՄՍ նախարարության մոտ», - մեզ հետ զրույցում նշեց Արզումանյանը:

*Նյութերը՝ ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԻ*

### ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԴԱԼՆ Է ՆՎԱՃԵԼ ՊԱՐԱԴԱՀՈՒԿԱՎԱԶՔԻՑ

Պատմության մեջ Հայաստանն առաջին մեդալն է նվաճել պարադահուկավազքի միջազգային մրցաշարում:

Այս մասին տեղեկանում ենք Հայաստանի դահուկավազքի ֆեդերացիայի տարածած հաղորդագրությունից:

«Պարադահուկավազորդ Գարիկ Մելքոնյանն (Աշոցք) առաջին անգամ Հայաստանի պարադահուկավազքի (LW6) պատմության մեջ գրավեց երրորդ հորիզոնականը Նորվեգիայում անցկացվող միջազգային վարկանիշային մրցաշարում:

Ի դեպ, սա Գարիկի դեբյուտն էր միջազգային մրցաշարերում, եւ Հայաստանի պարադահուկավազքում երբեւէ վաստակած առաջին մեդալը:

Շնորհավորում ենք մեր մարզիկին եւ մարզիչներ Արթուր եւ Ալլա Միքայելյաններին, Թադեւոս Պողոսյանին:

Գարիկը հաջորդիվ կմասնակցի հունվարին Թուրինում կայանալիք XXXII Համաշխարհային ուսանողական ձմեռային մարզական խաղերին, որտեղ ի դեպ, հաշմանդամային սպորտն առաջին անգամ է ընդգրկված լինելու, ինչպես նաեւ փետրվար-մարտ ամիսներին Նորվեգիայում կայանալիք Պարադահուկավազքի Աշխարհի գավաթին եւ Աշխարհի առաջնությանը»,- ասված է հայտարարության մեջ:

## ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ ՄՐՑԱՇԱՐԻ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ

Լեհաստանի Բելիստոկ քաղաքում ավարտվել է «Polish Open Kaliber» միջազգային մրցաշարը: Ինչպես տեղեկացրին Հայաստանի հրաձգության ֆեդերացիայից, տարվա վերջին ստուգատեսում փոխչեմպիոն է դարձել Էլմիրա Կարապետյանը:

Ըստ աղբյուրի՝ 10 մ օդամղիչ ատրճանակ մրցաձեւի կանանց պայքարի որակավորման փուլում Կարապետյանը խոցել է 573 միավոր եւ 2-րդ տեղով անցել եզրափակիչ, որտեղ Հայաստանի հավաքականի անդամ մարզուհին 234,7 միավորով նվաճել է արծաթե մեդալ:

## ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ ՈՒՇԱԳՆԱՑ Է ԵՂԵԼ

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 14-րդ տուրի «Ֆիորենտինա»-«Ինտեր» հանդիպումն ընդհատվել է:

Սերիա Ա-ի հերթական տուրի շրջանակներում «Ինտեր»-ը հյուրընկալվել էր «Ֆիորենտինա»-ին: Առաջին կեսի 17-րդ րոպեին խաղն ընդհատվեց «Ֆիորենտինա»-ի ֆուտբոլիստ Էդուարդո Բովեի ուշագնաց լինելու պատճառով:

Ֆուտբոլիստին խաղադաշտից դուրս են բերել պատգարակով, հետո՝ շտապ օգնության մեքենայով: Խաղը դադարեցվել է:

*● Դեկտեմբերի 8-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս ներկայացնել հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման, առեւտրի ծանուցում:**

*Լեռնիկ Մարգարյան (51 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար անձը պարտավոր է վճարել օրենքով սահմանված պետական տուրքը եւ պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը ծանուցման հետ միաժամանակ ներկայացնել լիազոր մարմին:

«Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառումը, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի կասեցումն ու դադարեցումը, ինչպես նաեւ ծանուցման ենթակա գործունեության իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Հրագործական ապրանքների արտադրություն, ներմուծում կամ առեւտուր» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է՝

- իրավաբանական անձինք՝ 50.000 ՀՀ դրամ,
- ֆիզիկական անձինք՝ 10.000 ՀՀ դրամ:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ունեմ «ԲՄՎ» մակնիշի մեքենա, որի գույքահարկը վճարվել է մինչեւ 2003թ.-ը: Սեփականատերը գտնվել է երկրից դուրս: Մեքենան գտնվում է անսարք վիճակում: Արդյոք գույքահարկը պե՞տք է վճարվի բոլոր մնացած տարիների համար, թե՞ կլինի բացառություն որոշ տարիների համար:**

*Տիգրան Ոսկանյան (32 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Գույքահարկի մասին» ՀՀ օրենք 2-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար նույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից, իսկ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 23.06.2003թ. ««Գույքահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» 03/17-Ն հրամանով հաստատված «Գույքահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգի 1-ին կետի համաձայն՝ անկախ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի շահագործման հանգամանքից եւ տեխնիկական վիճակից՝ մինչեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի՝ հաշվառումից (գրանցումից) հանելը ֆիզիկական անձը պարտավոր է օրենքով սահմանված չափով եւ ժամկետներում վճարել տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար հաշվարկված գույքահարկը:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Միաժամանակ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հարկային արտոնությունները սահմանվում են օրենքով, եթե առանձին հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Պարադահուկավազորդ Գարիկ Մելքոնյանը պատմության մեջ առաջին անգամ մեդալ է նվաճել միջազգային մրցաշարում: Առաջին անգամ մասնակցելով միջազգային մրցաշարի՝ նա գրավել է երրորդ հորիզոնականը Նորվեգիայում անցկացվող միջազգային վարկանիշային մրցաշարում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝ (060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | -5 - 9<br>-1 + 2 |
| Կոտայքի լեռներ | -6 - 8<br>-1 +1 |
| Կոտայքի նախալեռներ | -3 - 5<br>+3 + 5 |
| Գեղարքունիք | -7 - 11<br>- 2 + 1 |
| Լոռի | - 4 - 8<br>+1 + 4 |
| Տավուշ | 0 - 4<br>+3 + 6 |
| Արագածոտնի լեռներ | - 6 - 9<br>0 - 2 |
| Արագածոտնի նախալեռներ | -1 - 4<br>+ 4 + 7 |

| | |
|---|---|
| Արարատ | 0 - 4<br>+6 + 8 |
| Արմավիր | -1 - 5<br>+ 5 + 7 |
| Վայոց ձորի լեռներ | -6 - 10<br>0 - 2 |
| Վայոց ձորի նախալեռներ | -1 + 2<br>+12 + 14 |
| Սյունիքի հովիտներ | 0 + 3<br>+ 8 + 10 |
| Սյունիքի նախալեռներ | - 4 - 8<br>- 1 + 4 |
| ԼՂՀ | - 3 - 7<br>0 + 6 |
| Երեւան | 0 - 2<br>+ 2 + 4 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.12.2024**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*